ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/208

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Գ. Հակոբյանի (լիազորագիր տրված՝ 12.09.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21365-2019 գրությամբ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 18.12.2019թ. թիվ ԴԴ-1-Ե-11658 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ 26/26-1/21365-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվել է մասնակցել գնման հետագա գործընթացին, քանի որ ներկայացրել է սխալ հայտ՝ ընդհանուր գնի փոխարեն ներկայացնելով միավոր ապրանքի գին, ինչը ենթադրում է, որ Ընկերության առաջարկած գինը ֆինանսական տեսանկյունից իրագործելի չէ նշված գնման գործընթացի պահանջները բավարարելու համար:

Ընկերությունը հայտնել է, որ այն չի ունեցել որևէ միտում խոչընդոտելու գնման այս գործընթացին, այլ եղել է բացարձակապես աշխատակցի թերության պատճառ, ում վստահված է եղել նշված գործառույթի իրականացումը:

Քանի որ այն հանգեցրել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգին:

Ընկերության կողմից նշվել է հետևյալ փաստարկները.

1. Ընկերությունը նոր է սկսել մասնակցել պետական գնումների գործընթացին:
2. Ընկերության կողմից ներկայացվել են պետական գնումների մասնակցության մի քանի այլ հայտեր, որոնք բավարարել են նախատեսված պահանջներին:
3. Ընկերության կողմից ներկայացված հայտերի կազմում կան հայտեր, որոնց հիմքով Ընկերությունը հայտարարվել է հաղթող մասնակից և այժմ գտնվում է պայմանագիր կնքելու փուլում:
4. Ընկերությունը ունի դրական համբավ շուկայում իր ծառայությունների մատուցման, կնքված պայմանագրերի կատարման, ժամկետների պահպանման, մատուցված ծառայությունների որակի ապահովման և պայմանագրային այլ դրույթներով:
5. Պետական գնումներին մասնակցության կարգը Ընկերության կողմից սահմանված է կազմակերպության գնումների ռազմավարությամբ, ինչը ենթադրում է, որ Ընկերությունը մասնակցում է միայն այն գնումների գործընթացին, որը կարող է ապահովել կամ կատարել՝ ժամկետի և որակի չափանիշները հաշվի առնելով:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը ենթադրում է, որ կազմակերպությունը խախտել է հետևյալ կետերից մեկը կամ մի քանիսը.

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընկերությունը չի խախտել պայմանագրով նախատեսված պարտավորությունները, որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Ընկերությունը հրաժարվել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հայտարարված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից, քանի որ այդպես էր պահանջում ընթացակարգի ապահովման պահանջները:

ՀՀ դատական դեպարտամենտի հետ բանակցությունների արդյունքում Ընկերությանը առաջարկվեց կամ շարունակել գործընթացին մասնակցությունն Ընկերության կողմից առաջարկած գնով կամ հրաժարվել հետագա մասնակցությունից: Ինչպես նշվեց միավոր ապրանքի գնով նշված գնման գործընթացը ապահովելը հնարավոր չէր և այլընտրանք չունենալու պատճառով Ընկերությունը ընտրեց առաջարկված մյուս տարբերակը՝ ծանուցելով ՀՀ դատական դեպարտամենտին հրաժարվելու պատճառները և հայտի բովանդակության անհամապատասխանության պատճառները:

Ամփոփելով, Ընկերությունը խնդրել է.

1. Ընկերության սխալ ուղարկած հայտին մոտենալ որպես վրիպակի, այլ ոչ թե Ընկերության կողմից գնման գործընթացին խոչընդոտելու փորձի,

2. Թույլ տալ պետական գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցությանը, որի դեպքում Ընկերությունը թույլ չի տա հայտերի անհամապատասխանություններ, որոնք կհանգեցնեն նմանատիպ հետևանքների,

3. Ակնկալում ենք, որ որոշում կայացնելուց հաշվի կառնվի Ընկերության պետական գնումների գործընթացին մասնակցելու փորձի բացակայությունը, ինչն էլ հանգեցրել է վրիպակ թույլ տալու:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/208 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:37-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.12.2019թ. թիվ ԴԴ-1-Ե-11658 գրությամբ հայտնել է, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացվում է Դատական դեպարտամենտի կարիքների համար առանց տուփերի դատարկ սկավառակների (CD) ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/208 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:37-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանում, որով վերջինս հայտնել է, որ հայտի գնային առաջարկը լրացնելիս թույլ են տվել վրիպակ, այն է՝ ընդհանուր գնային առաջարկ ներկայացնելու փոխարեն, գնային առաջարկը ներկայացրել են միավոր ապրանքի հաշվարկով: Հիշյալ պարզաբանմամբ Ընկերությունը հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից և խնդրել է կազմակերպության հայտը չքննարկել:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումը, որոշել է չքննարկել Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21365-2019 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 18.12.2019թ. թիվ ԴԴ-1-Ե-11658 գրությունը, «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե*** ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.***<u>հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանում, որով վերջինս հայտնել է, որ հայտի գնային առաջարկը լրացնելիս թույլ են տվել վրիպակ, այն է՝ ընդհանուր գնային առաջարկ ներկայացնելու փոխարեն, գնային առաջարկը ներկայացրել են միավոր ապրանքի հաշվարկով: Հիշյալ պարզաբանմամբ Ընկերությունը հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից և խնդրել է կազմակերպության հայտը չքննարկել:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումը, որոշել է չքննարկել Ընկերության հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ **<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք</u>**

<u>չունեցող մասնակիցների ցուցակում, եթե *հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:*</u>

Այսպիսով՝ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված պարզաբանմամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից և խնդրել է Ընկերության հայտը չքննարկել, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21365-2019 գրությամբ «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԻնոտեքԻնջինիրինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**